ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հատուած Անդրէ Կոմթ-Սփոնուիլի “Մեծ առաքինութիւնների մասին համառօտ քննախօսութիւն. Իմաստասիրութեան օգտագործումն առօրեայ կեանքում” գրքից: (Լոնդոն, Վիլեամ Հէյմեման, 2001թ., ֆրանսերէնից անգլերէն թարգմանուած Քեթրին Թեմերսոնի կողմից):

Քաղաքավարութիւնն առաջին առաքինութիւնն է, եւ գուցէ միւս բոլոր առաքինութիւնների ակունքը: …

Այն կարող է քօղարկել եւ լաւագոյնը, եւ վատագոյնը, որով դառնում է կասկածելի: Քաղաքավարութիւնը կեղծիք է, իսկ մենք յիրաւի միտուած ենք զգուշանալու կեղծիքից: Այն զարդարանք է, եւ մենք հակուած ենք զգուշանալու զարդերից: Դիդերոնը խօսում է բարձրաստիճան մարդկանց “արհամարհական քաղաքավարութեան” մասին: Կարելի է նաեւ նշել ցածրաստիճան մարդկանց շողոքորթութեան կամ ստրկաբարոյ քաղաքավարութեան մասին:

Քաղաքավարի ապօրինածնի մօտ ի՞նչն է այդքան խանգարող: Կեղծաւորութիւնը չէ, որովհետեւ քաղաքավարի ապօրինածինը իրօք քաղաքավարի է: Քաղաքավարի դահիճն այնուամենայնիւ դահիճ է: Ինչպէս արիւնը սպիտակ ձեռնոցների վրայ աւելի տեսանելի է, այնպէս էլ չարը՝ քաղաքակիրթ լինելով, աւելի ակնյայտ է:

Միգուցէ շեղուել եմ, բայց ոչ այնքան պատահաբար, ինչքան զգօնութիւնից դրդուած: Քաղաքավարութիւնում կարեւորը, նախ եւ առաջ, նրանից չխաբուելն է: Քաղաքավարութիւնը առաքինութիւն չէ եւ չի կարող զբաղեցնել առաքինութեան
տեղը:

Ուրեմն ինչու՞ այն կոչել առաքինութիւններից առաջինը, միւս բոլոր առաքինութիւնների ակունքը: Հակասութիւնն այնքան էլ մեծ չէ, ինչքան կարող է թուալ: Առաքինութիւնների ակունքը չի կարող առաքինութիւն լինել (քանզի եթէ լինէր, այն նոյնպէս ակունքի կարիք կ'ունենար):

Քաղաքավարութիւնը միւս առաքինութիւններից առաջինն է ժամանակի առումով, եւ ոչ թէ կարեւորութեան: Այն ծառայում է որպէս անձի բարոյական զարգացման հիմք: Երեխան չունի բարոյական չափանիշներ, սակայն նա բաւական վաղ է յայտնաբերում “արգելքները”: “Այդպէս մի՛ արա, դա չարութիւն է, դա վատ է, լաւ չէ, անվայել է…” Կամ էլ՝ “Վտանգաւոր է”: Շատ

շուտով երեխան սովորում է տարբերել, թէ ինչն է պարզապէս վատ (չարութիւն) եւ ինչն է նաեւ ի՛ր համար վատ (վտանգ), սովորում է տարբերել ատելին վնասակարից: Չարութիւնը խիստ մարդկային չարիք է. չարիք, որը չի վնասում (գոնէ նրան, ով գործել է այն), եւ չարիք՝ առանց անմիջական եւ ներհատուկ վտանգի: Որոշ բաներ թոյլատրելի էն, որոշ բաներ արգելուած են: Կանոնը բաւարար է. այն նախորդում է դատավճռին եւ դրա հիմքն է: Բայց, միւս կողմից, միթէ՞ կանոնը չունի այլ հիմք, քան պայմանականութիւնը, չունի այլ արդարացում, քան վարուեցողութիւնը եւ վերջինիս հաստատած կանոնները: Այո, սա փաստացի կանոն է, անբասիր կանոն, քաղաքավարութեան կանոն: Մի՛ ասա վատ բառեր, մի՛ ընդհատիր, մի՛ հրիր, մի՛ գողացիր, մի՛ ստիր: Երեխային այս բոլոր ցուցմունքները միանման էն թւում ("Լաւ չէ"): Բարոյականի զանազանումը գեղագիտականից աւելի ուշ կը լինի, այն էլ՝ աստիճանաբար: Այսպիսով, քաղաքավարութիւնը նախորդում է բարոյականութեանը, կամ, աւելի ճիշտ, բարոյականութիւնը ի սկզբանէ ոչ աւելին է, քան քաղաքավարութիւն. համաձայնութիւն վարուեցողութեան կանոնների ու աշխարհի ձեւաչափերի հետ: Կանտի բարոյագիտութեան սկզբունքներից մէկն այն է, որ մարդը կատարուածից չի կարող եզրակացնել, թէ ինչ պէտք է անի: Սակայն երեխան վաղ հասակում ստիպուած է հէնց այդպէս վարուել, եւ միայն այս ձեւով է նա մարդ դառնում: Կանտն ինքը համաձայն է: "Մարդը դառնում է մարդ միայն ուսմամբ,- գրում է նա: -մարդը սոսկ այն է, ինչ ուսումն է իրէն դարձնում": Իսկ գործընթացը սկսւում է դաստիարակութեամբ, որը "կենդանական բնոյթը փոխում է մարդկայինի": Սրանից աւելի լաւ չէր կարելի ասել: Սովորութիւնը նախորդում է արժէքին, հնազանդութիւնը՝ յարգանքին, ընդօրինակումը՝ պարտականութեանը: Ուստի քաղաքավարութիւնը ("այդպէս չէն անում") նախորդում է բարոյականութեանը ("այդպէս պէտք չէ անել"): Բարոյականութիւնը կամաց-կամաց դառնում է ներքին քաղաքավարութիւն, որն իրէն ազատել է քննարկուելուց կամ երեւալուց, եւ հետաքրքրելուց, ու ամբողջովին կենտրոնացած է նպատակների վրայ, որի հետ քաղաքավարութիւնն առնչութիւն չունի: Լաւ վարուելաձեւը նախորդում է եւ պատրաստում է ուղին դէպի բարի արաքներ: Բարոյագիտութիւնը հոգու քաղաքավարութիւն է, ներքին կեանքի բարեկրթութեան կանոնների, պարտականութիւնների օրէնսգիրք, էութեան հանդիսակարգ: Միւս կողմից, քաղաքավարութիւնը կարելի է նմանեցնել մարմնի բարոյականութեան, վարուեցողութեան կանոնների, հասարակութեան մէջ ապրելաձեւի օրէնսգրքի,
հանդիսակարգ ոչ էութեան համար:

Եւ այսպէս, բարոյականութիւնը սկսւում է քաղաքավարութիւնից: Բայց այն պէտք է սկսուի ինչ-որ տեղից: Բնական առաքինութիւններ չկան, ուստի մենք պէտք է դառնանք առաքինի: Ինչպէ՞ս: "Այն ամէնը, որ պէտք է սովորենք նախքան անելը,- ասում է Արիստոտէլը,- սովորում ենք անելով": Սակայն ինչպէ՞ս կարող ենք անել այն, ինչ չենք սովորել: Երկու ձեւ կայ դուրս գալու

այս շրջանաձեւ պատճառականութիւնից. մէկը ապրիորութիւնն է, միւսը՝ քաղաքավարութիւնը: Սակայն ապրիորութիւնը մեր հասկացողութիւնից դուրս է, իսկ քաղաքավարութիւնը՝ ոչ: “Մենք դառնում ենք արդար,- շարունակում է Ապիստոտելը,- անելով արդար գործեր, չափաւոր՝ չափաւորութիւն դրսեւորելով, խիզախ՝ խիզախօրէն վարուելով”: Սովորութիւններով,- ըստ երեւոյթին ասում է Արիստոտէլը, բայց այդ պատասխանը ակնյայտօրէն անբաւարար է: Սովորութիւնը ենթադրում է նախնական գոյութիւնը այն բանի, որը մենք դարձնելու ենք սովորոյթ, ուստի չենք կարող այն հաշուի առնել: Կանտը աւելի օգտակար պատասխան է տալիս: Նրա համար առաքինութեան այս առաջին նշոյլները կարելի է բացատրել դաստիարակութեան պայմաններով, այլ կերպ ասած՝ որպէս արտաքին ճնշման արդիւնք: … Դաստիարակութիւն … Յարգանք վարուելաձեւին ու բարեկրթութեանը … Ասել “խնդրում եմ” կամ “ներեցէք”, նշանակում է ձեւանալ յարգալից: Ասել “շնորհակալութիւն”, նշանակում է ձեւանալ երախտապարտ: Եւ յարգանքի ու երախտապարտութեան հէնց այս ցուցադրութեամբ էլ սկսւում էն եւ՛ յարգանքը, եւ՛ երախտապարտութիւնը: Ճիշտ այնպէս, ինչպէս բնութիւնը ընդօրինակում է արուեստին, բարոյականութիւնը ընդօրինակում է քաղաքավարութեանը, որն էլ ընդօրինակում է բարոյականութեանը: Եթէ մենք դառնում ենք բարոյական, ապա դա ոչ թէ առաքինութեան միջոցով է, այլ՝ ուսման, ոչ թէ յանուն բարութեան է, այլ՝ ձեւի, ոչ թէ բարոյականութեան նկատառումներով է, այլ՝ քաղաքավարութեան: Բարոյականութիւնը նախ հնարք է, յետոյ փաստ: Առաքինութիւն ընդօրինակելով, դառնում ենք առաքինի: “Քանզի երբ մարդիկ խաղում էն այս դերերը,- գրում է Կանտը,- աստիճանաբար հաստատւում էն առաքինութիւններ, որոնք մինչ այս միայն ձեւացուել են: Այս առաքինութիւններն ի վերջոյ կը դառնան խաղացողի խառնուածքի մի մասը”: … “Բնաւորութեան կառուցուածքները բխում էն նման գործունէութիւններից”, ասում է Արիստոտէլը: Քաղաքավարութիւնն առաքինութեան այն ձեւացումն է կամ նմանութիւնը, որից առաջանում էն առաքինութիւնները:

Մենք ի վերջոյ նմանւում ենք նրան, ինչն ընդօրինակում ենք եւ քաղաքավարութիւնը, աննկատելիօրէն մղում է, կամ կարող է մղել դէպի բարոյականութիւն: **Ամէն մի ծնող գիտի դա եւ դա կոչւում է երեխայ մեծացնել:** Էս լաւատեղեակ եմ, որ քաղաքավարութիւնն ամէն ինչ չէ, ոչ էլ էականն է: Այնուհանդերձ, ընդունուած փաստ է, որ առօրեայ լեզուում **“լաւ դաստիարակուած”** լինելը նշանակում է նախ եւ առաջ քաղաքավարի լինել, ինչն ակնյայտ երեւոյթ է… “Դաստիարակում” բառը, գիտեմ, մեզ հաճելի չէ, բայց ո՞վ դրա կարիքը չունի: **Մէրը բաւարար չէ երեխայ դաստիարակելու համար, բաւարար չէ անգամ նրանց սիրելի կամ սիրալիր դարձնելու համար:** Քաղաքավարութիւնը եւս բաւարար չէ: Դա է պատճառը, որ կարիք ունենք եւ

քաղաքավարութեան, եւ սիրոյ: Ընտանեկան դաստիարակութիւնը, ըստ իս, այս երկու բեւեռների միջեւ է գտնւում …

Ուստի քաղաքավարութիւնն առաքինութիւն չէ, այլ մի նմանակում, որն առաքինութեան ընդօրինակումն է (չափահասների համար) եւ նրա ուղենիշը (երեխաների համար): **Երեխայի քաղաքավարութիւնը, իր բնոյթով, կարող է չտարբերուել չափահասների քաղաքավարութիւնից, սակայն տարբեր է իր նշանակութեամբ:** Երեխայի համար այն էական է, մեծերի համար՝ անէական: Ինչը՞ կարող է աւելի տհաճ լինել քան վատ դաստիարակուած երեխան, բացառութեամբ, գուցէ, չար չափահասի: **Մենք այլեւս երեխաներ չենք:** Մենք գիտենք ինչպէս սիրել, ինչպէս կամենալ եւ ինչպէս դատել: Եւ մենք ընդունակ ենք առաքինութեան եւ սիրոյ, ինչին քաղաքավարութիւնը չի կարող փոխարինել… Կան անգամ այնպիսի մարդիկ, որոնց քաղաքավարութիւնն իր կատարելութեամբ խանգարում է մեզ: Յիրաւի, լիակատար քաղաքավարութիւնը կեղծաւորութեան կասկածի տեղիք է տալիս, քանզի անկեղծութիւնը երբեմն պահանջում է, որ մենք շրջապատին տհաճութիւն, զարմանք կամ ցաւ պատճառենք: Բոլորս էլ գիտենք այնպիսի մարդկանց, ովքեր իրենց անկեղծութեամբ հանդերձ, ողջ կեանքում մնում էն բարեկրթութեան գերիներ՝ իրենց անձնաւորութիւնը չբացայայտելով շրջապատին՝ բացառութեամբ քաղաքավարութեան ապակեպատ շղարշի ետեւից, կարծես վերջնականօրէն շփոթելով ճշմարտութիւնն ու բարեկիրթ վարուելակերպը… **Գերադասելի է լինել չափազանց անկեղծ՝ ի հաշիւ քաղաքավարութեան, քան թէ չափազանց քաղաքավարի՝ ի հաշիւ անկեղծութեան:**

Կեանքում աւելի կարեւոր բաներ կան, քան բարեկրթութիւնն է, իսկ քաղաքավարութիւնն էլ բարոյականութիւնը չէ: Այնուհանդերձ, այն անիմաստ էլ չէ: Քաղաքավարութիւնը մի փոքր բան է, որը ճանապարհ է հարթում դէպի մեծ բաներ… Ինքնաբաւ քաղաքավարութիւնը, որն իրէն չափազանց լրջօրէն է վերաբերւում եւ հաւատում է իրէն, այն է, երբ սեփական բարեկրթութեան պատճառով, խախտում է իր իսկ կողմից սահմանուող կանոնները: Ինքնաբաւութիւնը միշտ անքաղաքավարի է:

Իմաստասէրները կը բանավիճեն այն հարցի շուրջ, թէ ձեւն իրօք ամէնն է՝ ինչ կայ, թէ բարոյականութեան եւ քաղաքավարութեան միջեւ տարբերութիւնը մտացածին է: Գուցէ սոսկ վարուելակերպն ու յարգալից վերաբերմունքը՝ քաղաքավարութիւնը իրօք ամէն ինչ են… Սակայն էս նման բանի չեմ հաւատում: Սէրն իր տեղն ունի, բարութիւնն՝ իր, կարեկցանքն էլ՝ իր: Քաղաքավարութիւնն ամէն ինչը չէ, յիրաւի՝ գրեթէ ոչինչ է: **Գրեթէ,** բայց ոչ իսպառ, քանզի մարդն ինքը **գրեթէ կենդանի է:**